Լավությունն արա, ջուրը գցիր՝ մի օր առջևդ կգա...

ԲԱՐԵԳՈՐԾ

§ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ¦

BAREGORTS ապրիլ, 2018, 2 (39), БАРЕГОРЦ

ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ 30-ԱՄՅԱԿԻ ՊՈՒՐԱԿԻ ՀԻՄՆՈՒՄԸ

Ռուսաստանում Հոկտեմբերյան հեղաշրջումից և խորհրդային կարգերի հաստատումից հետո համաշխարհային հեղափոխության մարմաջով տարված թուրքասեր բոլշևիկների գործած ճակատագրական սխալներից մեկն էլ Կավբյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի որոշումով 97% հայ բնակչությամբ Լեռնային Ղարաբաղը Հայաստանից կտրելն ու նորահորջորջ Ադրբեջան պետությանը բռնակցելն էր և ԽՍՀՄ կազմավորումով՝ հայոց պատմական Գողթան գավառ Նախիջևանը ինքնավար մարզի կարգավիճակով՝ ոչ մի սահման չունեցող նույն Ադրբեջանի ենթակայությանը հանձնելը:

Պատմական ու ճակատագրական այդ սխալի հետևանքներն ավելի քան ցավալի եղան. Անհիշելի ժամանակներից՝ կրակի, ռազմի ու քաջության աստված Վահագնի պաշտամունքով, նրան փառաբանող իր գուսաններով, որտեղ հայ հանրությանը և իր իսկ հիմնած դպրոցներում հայերեն գրերն ուսուցանելու հետ միասին քրիստոնեության առաջին քարոզիչներից մեկը ոչ ավել ոչ պակաս Մեսրոպ Մաշտոցն է եղել, խորհրդային տարիներին թուրք-ազերիների հետևողական ջանքերով իսպառ հայաթափվեց, հայկական պատմամշակութային հուշարձանները, Հին Ջուղայի տասնյակ հազարից ավել խաչքարային գլուխգործոցները ոչնչացվեցին: Մեր Նախիջևանն այսօր դարձել է Հայաստանի Հանրապետության ու նրա մայրաքաղաք Երևանի անվտանգությանն սպառնացող թշնամական տարածք, ուր նախապատրաստական զորավարժություններ են իրականացնում ազերիական զորաբանակները թուրք հրամանատարների ղեկավարությամբ:

Ո՞վ է այս բացահայտ անարդարության պատասխանատուն...Չէ՞ որ նույն ճակատագիրն էր սպառնում հայոց

պատմական Արցախին, եթե ուղիղ 30 տարի առաջ՝ 1988 թ. փետրվարին, չսկսվեր Արցախյան անկախադեպ ու հզոր շարժումը, և չփլուզվեր խորհրդային կայսերապետությունը:

Խորհդային յոթ տասնամյակներում «Կարմիր Քուրդիստան» արհեստական միջնորմով Հայաստանից անջրպետված Ղարաբաղում իրականացնում էին նույն քաղաքականությունը և ամեն ինչի ադրբեջանականացման գործընթացը. արդեն ԼՂԻՄ-ի 97% հայ բնակչության 75%-ն էր մնացել, և գնալով սաստկանում էին ադրբեջանական խորհրդային իշխանությունների բռնաճնշումները արցախահայության նկատմամբ:

Բայց ո՞վ կամ ի՞նչը կարող էր կոտրել Արշակունյաց թագավորության անկումից անմիջապես հետո Մեծ Հայքի Արևելյան կողմում Արցախ-Ուտիքյան թագավորություն ստեղծած, Դավիթ-Բեկի ու Մխիթար սպարապետի ոգով դաստիարակված ազատատենչ ու ըմբոստ արցախահայի կամքը, որ Խամսայի Մելիքություններից ի վեր մահմեդական շրջափակումների մեջ անկախ պետականություն էր վերստեղծել և դիվանագիտական հարաբերություններ հաստատել ոչ միայն անմիջական հարևանների, այլև Ռուսաստանի ու այլ երկրների հետ:

Բայց վիճակը դարձել էր օրհասական, ծառացել էր լինել - չլինելու խնդիրը, որ այն ժամանակներում հստակ գիտակցումով բանաձևեց Հայաստանի ապագա Ազգային հերոս Մոնթե Մելքոնյանը. «Եթե կորցնենք Արցախը, կշրջենք մեր պատմության վերջին էջը»:

1988 թ. փետրվարի 12-ին ԼՂ մարզկոմը Ադրբեջանի կազմից դուրս գալու և Հայաստանին միանալու պատմական որոշում կայացրեց: Սկսվեց Արցախյան շարժումը՝ պատմական արդարությունը վերականգնելու, Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու նպատակադրմամբ: Հայությունն իր միլիոնանոց խաղաղ ցույցերով սատար կանգնեց իր ազգակից հարազատներին: Դրան հաջորդեցին սումգայիթյան ջարդերը, Հայաստանի երկրաշարժը և Բաքվի, Կիրովաբադի, և գերազանցապես հայաբնակ Խանլարի, Դաշկեսանի, Գետաբեկի շրջանների հայերի բռնի տեղահանությունն ու արտաքսումը:

1989 թ. դեկտեմբերի 1-ին ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը և ԼՂ Ազգային խորհրդը համատեղ ընդունեցին N 1650-XI որոշումը՝ Լեռնային Ղարաբաղը ՀԽՍՀ-ին վերամիավորելու մասին, որը ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը համարեց հակասահմանադրական: Անօգուտ էին միավորյալ հայության օրինական պահանջները, որոնց Ադրբեջանը պատասխանեց լայնածավալ պատերազմով՝ ջանալով արյան մեջ խեղդել, ահուսարսափի մատնել արդեն բռունցքված ու իր պատմական իրավունքներին տեր կանգնող հայությանը:

Նախ՝ Պոլյանիչկոյի, Մակաշովի ղեկավարությամբ ադրբեջանցի և ռուս խորհրդային զինվորական հատուկջոկատայինները անձնագրային ռեժիմի ստուգման պատրվակով «Կոլցո» (Օղակ) անվանված գործողությամբ փորձեցին Արցախը «մաքրել» հայերից: Ապա հայերից դատարկվեցին և ադրբեջանցիներով բնակեցվեցին նախկին Շահումյանի շրջանը՝ Գետաշեն, Ազատ, Կամո, Մարտունաշեն գյուղերով, Հադրութի և Բերդաձորի շրջանների տասնյակ գյուղեր: Օղակը սեղմվում էր, դանակը ոսկորին էր հասել: Հանուն Արցախի ոտքի կանգնեց համայն հայությունը, խաղաղ շարժումը վերածվեց պատերազմական վճռական գործողությունների, առանձին ջոկատները միավորվելով՝ կազմավորեցին Արցախի ազատագրական բանակը: Անօրինակ հերոսության բացառիկ էջեր գրվեցին, և Արցախը՝ հարակից շրջաններով, որ նույնպես հայկական հողեր էին ոչ հեռավոր անցյալում, ազատագրվեց ազերիական բռնությունից: Ահա ինչու Արցախյան շարժման 30-ամյակը տոնում է այսօր հայությունն ամբողջ աշխարհում:

Տոնակատարությանը Երևանի պետական համալսարանը և «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը» մասնակցում են յուրովի: Շուրջ հարյուրամյա հայոց մայր բուհը միշտ է եղել նախաձեռնողներից մեկը՝ սկսած գաղափարական փուլից:

Ամբողջ Հայաստանը և սփյուռքն ընդգրկած շարժումն ինքնաբուխ էր, բայց անկազմակերպ չէր: Միլիոնանոց ցույցերն անգամ ընթանում էին բացառիկ կարգապահությամբ, նույնիսկ այն դեպքերում, երբ մարդկանց ահաբեկելու նպատակով կողքից հռնդում էին ցուցարարներին շրջապատած խորհրդային տանկերը:

Օպերայի թե Մատենադարանի հարակից տարածքներում հենց համալսարանականների պահանջով ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը Արցախը Հայաստանին վերամիավորելու խնդիրը դարձրեց օրակարգի հարց: 1988 թ. հունիսի 15-ին բանասիրական ֆակուլտետում գումարված միտինգը, որին նաև Արցախի ներկայացուցիչներ էին մասնակցում շարժման առաջամարտիկ դերասանուհի Ժաննա Գալստյանի ղեկավարությամբ, ԵՊՀ Չարենցի անվան դահլիճից բազմաթիվ ուսանողների համալրումով տեղափոխվեց Թատերական (այժմ՝ Ազատության) հրապարակ: Օպերայի դահլիճում ընթացող նստաշրջանը, որ քննարկվում էր ԼՂ խնդիրը, մի տեսակ «հսկվում» էր մուտքի աստիճանները զբաղեցրած հազարավոր ուսանողների ու դասախոսների նստացույցով և հրապարակում խմբված հազարավորներով: Դուրս եկող պատգամավորները պատասխան պիտի տային նրանց ու բազմահազար ցուցարարներին:

Ադրբեջանը այս ամենին հակադարձում էր յուրովի: Նորանոր բռնություններ, ազերիների վայրագություններից մի կերպ իրենց կյանքը փրկած վիրավոր գաղթականների հոսքեր, երկրաշարժի զոհերի առթիվ տմարդի «շնորհավորանքներ»: Իսկ երբ հնչեց բանաստեղծի՝

«Մենակդո՛ւ չես, որդիմանամ,- յոթը դրախտ
ունեմ խլված,
Սիփանսարը Կարսն ու Վանը, Վանա ծովը,
Անին փլված,-
Հայկ Նաահապետ Մասիսի պես դեռ բանտում են
ծունկը ծալված,

Տար տար ո ՛ ս է Տար ո ն ը դէ ռ, ո՞ ւ ր ես ,
Ավ ար ա՛ յ ր
Ղար աք ադ »

կարգախոսը և Վազգեն Սարգսյանի զորակոչը, կազմավորվեցին մահապարտների «Արծիվ» գումարտակները: Ռազմական գործողությունների հենց սկզբից էին համալսարանականները կազմակերպչի և առաջնորդի դեր ստանձնել: ՀՀ Ազգային հերոս Թաթուլ Կրպեյանը Հյուսիսային Արցախի ընդհանուր հրամանատարն էր, երբ դավադրաբար զոհվեց «Օղակ» գործողության ժամանակ, ֆիզիկոս և ռազմագետ Լեոնիդ Ազգալդյանը իր ստեղծած զենքերով կռվող իր իսկ հիմնադրած «Անկախության բանակով» 1990 թ. փետրվարից էր մինչև Տոնաշենի մոտ զոհվելը հերոսացել ազատագրական մարտերում, Շուշիի ազատագրողներից մեկը Հայաստանի հերոս Դուշման Վարդանն էր՝ հայ մարտիկների ոգեշունչ առաջնորդը, որ հայտնվում էր բոլոր վտանգավոր մարտերում, Արցախի հերոս Պետրոս Ղևոնդյանը...

Բոլորին հիշել չենք կարող այս պահին, մանավանդ ապրողներին, սակայն պետք է ընդգծենք, որ համալսարանականները եղել են շարժման առաջամարտիկներ, իսկ երբ այն վերածվել է ազատագրական պատերազմի, դարձել են լեգենդար հերոսներ, մեր նորօրյա հերոսական պատմության կերտողներ, որոնցով պետք է հպարտանանք:

ԵՊՀ ուսանողական կառույցների նախաձեռնությամբ մարտի 10-ին շուրջ 80 ուսանող դասախոսների, ուսանողության հետ տարվող աշխատանքների կենտրոնի տնօրեն Վահագն Վարագյանի, ուսխորհրդի նախագահ Դավիթ Ափոյանի և 2016 թ. ապրիլյան քառօրյա պատերազմի մասնակիցներ Շուլի Հակոբյանի, Գոռ Դարմանյանի և Ռաֆայել Հովհաննիսյանի հետ մեկնեցին Արցախ:

Պետք է ընդգծել, որ արցախյան ուղևորությունը լինում է հագեցած, և չի էլ զգացվում՝ ինչպես անցավ ժամանակը: Ամեն անգամ ուղևորների կազմը փոխվում է, և նորանոր ուսանողներ են արժանանում այս հաճելի ճամփորդությանը, որ վերածվում է հայրենաճանաչողության բովանդակալից դասի: Այս անգամ էլ դա սկսվեց դեռ ավտոբուսից, երբ ուղեկցող դասախոսները, պատերազմում սխրանքներ գործած իրական հերոսները լիարժեք բավարարեցին ուսանողների հետաքրքրասիրությունը՝ նրանց հաղորդելով լրացուցիչ գիտելիքներ և տեղեկություններ մարտական ծառայության մասին:

Դադիվանք ու Գանձասար այցելեցին հենց առաջին օրը, իսկ հաջորդ օրն իրականացավ ուղևորության գլխավոր նպատակներից մեկը՝ Տոնաշենում մասնակցություն Արցախի պաշտպանական բանակի հիմնադրման 25-ամյակի հանդիսավոր արարողությանը: Շարային մարզահրապարակում հուզիչ էր ուսանողների հանդիպումը հայրենյաց պաշտպան զինվորների հետ: Տպավորիչ էին թե՛ պրոֆ. Ս. Մուրադյանի հայրենաշունչ ոգևորիչ խոսքը՝ ուղղված զինվորներին ու հրամկազմին, թե՛ ուսանողների գեղարվեստական ելույթները, որոնք անկասկած բարձրացրին նրանց տրամադրությունն ու մարտական ոգին:

– Սիրելի՛ զավակներ,- ասաց պրոֆեսորը,- մեծ պատիվ ու ծանր պարտականություն է հայրենիքի զինվոր լինելը, գիտե՛ք, որ ձեր դեմ կանգնած է մեր հոխորտացող ու խարդախ թշնամու զինվորը, որը կատարում է իր նենգաբարո վերադասի ստոր հրամանները: Արցախյան ազատամարտի հերոսական սերունդը, վազրի երախից պոկելով, նվաճել է Արցախի ազատությունը և թշնամուն պարտադրել այս խաբուսիկ խաղաղությունը: Դուք ձեր զգոնությամբ ու արիությամբ պարտավոր եք պահպանել ձեր հայրերի ու պապերի ձեռքբերումները և ավելի ընդլայնել ու ամրակայել՝ կտրելով թշնամու չարագործ ձեռքն ու լեզուն, խաղաղություն պարտադրել նրան՝ չեզոքացնելով մեր հայրենիքին ու պետականությանը սպառնացող բոլոր վտանգները: Հիշե՛ք, որ այստեղ՝ սահմանային դիրքերում կանգնած, դուք պաշտպանում եք ո՛չ միայն Արցախի հողը, այլև ձեր հայրական տան շեմն ու ընտանեկան սրբությունները որտեղ էլ գտնվելիս լինեն նրանք՝ Արցախի որևէ շրջանում, Երևանում թե Հայաստանի որևէ մարզում:

Անփորձանք ծառայություն եմ մաղթում բոլորիդ, բարով ավարտեք այն, վերադառնաք ձեր տները, շարունակեք ուսումը կամ սիրած գործը և վայելեք ձեզ արժանի երջանկությանը:

Ստեփանակերտի «Արցախ պարկ» և Շուշիի «Ավան պլազա» հյուրանոցներում երկու հետաքրքիր գիշեր անցկացնելուց հետո՝ մարտի 12-ին Բերձորի տարածքում կայացավ ծառատունկը: Խորհրդանշական հետաքրքիր տեղ էր ընտրված. ճիշտ «Մոնթե Մելքոնյան» պուրակի դիմաց՝ մայրուղու հակառակ կողմում, հիմնվեց «Արցախյան շարժման 30-ամյակի պուրակը»՝ ընկուզենիների տնկումով: Ինչպես միշտ՝ ծառատունկը նախապատրաստվել էր հիմնադրամի գործադիր տնօրեն Գ. Մելիքյանի հոգածությամբ: Պուրակ հիմնելն էլ իր արարողակարգն ունի: «Արցախյան շարժման 30-ամյակի» հիմնադրմանը ներկա էր Ստեփանակերտի քաղխորհրդի նախկին նախագահ պրն Մաքսիմ Միրզոյանը, ով եղել Արցախյան շարժման ակունքներում: Նա հետաքրքիր մանրամասներ պատմեց ԼՂ մարզկոմի պատմական որոշման, Ադրբեջանի սանձազերծած պատերազմի և նրան հակընդդեմ ազատագրական պայքարի սկզբնական փուլի մասին:

Սովորականի պես առաջին ընկուզենին տնկելիս Գ. Մելիքյանը հնչեցրեց Լևոն Զավեն Սյուրմելյանի «Ասաց-

վածք ծառ տնկելու մասին» բանաստեղծությունը, և վերջին՝ «Մեռելներուս իբրև խաչ ես այս ծառը տնկեցի» տողից հետո արևահամ գինով օծվեց փոսի մեջ դրված տնկին, որի արմատներին զրնգացող բահերով հող լցվեց, ոտքերով տրորելով ամրացվեց ու ջրվեց ապագա ծառը: Վաղօրոք պատրաստված փոսերի մեջ ամեն ուսանող արցախյան հողում տնկեց իր ծառը: Ծառերն այդ կամրանան հայրենի

հողում, բերքատու կդառնան, կդառնան պուրակ ու այգի և իրենց կանաչ խշշոցով բերքը վայելողներին կհիշեցնեն ոչ միայն երեսնամյա վաղեմության փոթորկալից օրերը, այլև Արցախն ազատագրած անմահ հերոսներին:

... Եթե ձնախառն ու ամպամած եղանակը և ճանապարհի վտանգավորության զգացողությունը չլիներ, Բերձորի հյուրատանը կազմակերպված ճոխ խնջույքից, սեղանապետի ոգեշունչ ելույթներից, Քաշաթաղի շրջանի ղեկավարության ներկայացուցիչների հետ ստեղծված ջերմ մթնոլորտից ու «կենդանի երաժշտության» ուղեկցությամբ մոլեգին պարերից հագիվ թե հագենային ուսանողները:

Երևան վերադարձող ավտոբուսները սպասում էին:

ԱԿԱՆԱՏԵՍ

Մարտական հերթապահություն կատարած ուսանողների վարձավճարներ

1. Արգամ Արթուրի Եղիազարյան-թյուրքագիտություն 4-րդ կուրս-25.000 դրամ
2. Տիգրան Կարոյի Հաջոյան - թյուրքագիտություն 3-րդ կուրս- 30.000 դրամ
3. Վահագն Սարգսի Բարսեղյան- արաբագիտություն 2-րդ կուրս- 30.000 դրամ
4. Վահան Համբարձումի Կոստանդյան- թյուրքագիտություն 2-րդ կուրս - 30.000 դրամ
5. Գեղամ Հայկի Բիջոյան- արաբագիտություն 3-րդ կուրս- 30.000 դրամ
6. Կարլեն Արայիկի Ղազարյան- արաբագիտություն 2-րդ կուրս-30.000 դրամ
7. Հովհաննես Արմենի Մարգարյան- արաբագիտություն 3-րդ կուրս-25.000 դրամ
8. Մնացական Անդրանիկի Դարբինյան-իրանագիտություն 2-րդ կուրս-30.000 դրամ
9. Արսեն Հենրիկի Խաչատրյան- իրանագիտություն 2-րդ կուրս-30.000 դրամ
10. Նարեկ Վոլոդայի Ներսիսյան- իրանագիտություն 2-րդ կուրս-30.000 դրամ
11. Սևակ Արթուրի Սարգսյան- թյուրքագիտություն 2-րդ կուրս-30.000 դրամ
12. Սևակ Վոլոդայի Ավագյան- արաբագիտություն 3-րդ կուրս- 25.000 դրամ
13. Սիմոն Սամվելի Հովհաննիսյան-2014-16թթ. թյուրքագիտություն 2-րդ կուրս-30.000 դրամ
14. Տարոն Վրույրի Սարգսյան- արաբագիտություն 3-րդ կուրս-25.000 դրամ
15. Արթուր Հրաչյայի Բաղալյան- 2015-17թթ. արաբագիտություն 2-րդ կուրս- 30.000 դրամ

16. Համբարձում Լևոնի Գրիգորյան -իրանագիտություն 3-րդ կուրս -30.000 դրամ
17. Լևոն Գարեգինի Փիլիպոսյան -2015-17թթ. արաբագիտություն 2-րդ կուրս -30.000 դրամ
18. Պավլիկ Գագիկի Աբովյան - արաբագիտություն 2-րդ կուրս -30.000 դրամ
19. Միհեր Ավագի Ավագյան - իրանագիտություն 3-րդ կուրս -30.000 դրամ
20. Գագիկ Մխիթարի Գուրջանյան - իրանագիտություն 2-րդ կուրս -30.000 դրամ
21. Գուրգեն Ռաֆիկի Փանոսյան -թյուրքագիտություն 3-րդ կուրս -30.000 դրամ
22. Արկադի Արմենի Դաղբաշյան - իրանագիտություն 3-րդ կուրս -30.000 դրամ
23. Ռաֆիկ Արմենակի Ծատուրյան- թյուրքագիտություն 3-րդ կուրս -30.000 դրամ
24. Մանվել Ավետիքի Սերոբյան- թյուրքագիտություն 3-րդ կուրս -30.000 դրամ
25. Արման Սոսի Անտոնյան - իրանագիտություն 2-րդ կուրս -30.000 դրամ
26. Սոս Սասունի Բաղասյան - իրանագիտություն 3-րդ կուրս -25.000դրամ
27. Հակոբ Վաչագանի Զաքարյան - իրանագիտություն 2-րդ կուրս -30.000 դրամ
28. Համլետ Արմենի Սարգսյան -թյուրքագիտություն 2-րդ կուրս -30.000 դրամ
29. Էրիկ Արտակի Սարգսյան -արաբագիտություն 1-ին կուրս -30.000 դրամ
30. Սուրեն Հրանտի Օհանջանյան -իրանագիտություն 2-րդ կուրս -30.000 դրամ
31. Նորիկ Հարությունի Հակոբյան -իրանագիտություն 3-րդ կուրս -25.000 դրամ

Սամվել Ժիրայրի Գյուլազյան - թյուրքագիտություն 3-րդ կուրս -25.000 դրամ

Տիգրան Արայի Ազիզյան -թյուրքագիտություն, մագ. 1-ին կուրս -25.000 դրամ

Քառօրյա պատերազմին մասնակից ուսանողներ

34. Ռոբերտ Խաչիկի Հովհաննիսյան - թյուրքագիտություն 3-րդ կուրս - 120.000 դրամ
35. Մխիթար Համլետի Դավթյան -թյուրքագիտություն 3-րդ կուրս -120.000 դրամ
36. Դավիթ Խաչատուրի Միհերյան -արաբագիտություն 2-րդ կուրս -120.000 դրամ
37. Կարեն Արտավազդի Վարոսյան -թյուրքագիտություն 3-րդ կուրս -120.000 դրամ
38. Արեգ Լևոնի Սարդարյան -իրանագիտություն 3-րդ կուրս - 120.000 դրամ
39. Տիգրան Հակոբի Սարգսյան -իրանագիտություն 3-րդ կուրս -120.000 դրամ
40. Հովհաննես Արմենի Հարությունյան -իրանագիտություն 3-րդ կուրս - 120.000 դրամ
41. Գոռ Սեյրանի Մաթևոսյան - իրանագիտություն 3-րդ կուրս -120.000 դրամ

ՀՀ ԶՈՒ ծառայություն իրականացրած ուսանողներ

42. Գեղամ Արայի Աբրահամյան -2014-16թթ. արաբագիտություն 3-րդ կուրս - 25.000 դրամ
43. Պայքար Գառնիկի Գրիգորյան - 2016-18թթ. արաբագիտություն 1-ին կուրս - 25.000 դրամ

ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետ

44. Սիրանույշ Մադոյան -Արևելագիտության ֆակ., արաբագիտություն 4-րդ կուրս - 275.000 դրամ

ԵՊՀ այլ ֆակուլտետների ուսանողներ

45. Սեդա Եղիազարյան - ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետ, Հայոց լեզու և գրակ. մասնագիտության 1-ին կուրս -35.000 դրամ
46. Տաթևիկ Մերջանյան - ԵՊՀ հայ բանասիրության ֆակ. հայ ցորդ -100.000 դրամ
47. Յուրիկ Կիրակոսյան - ԵՊՀ իրավագիտության մասնագ. 2-րդ կուրս - 100.000 դրամ
48. Արման Յուխանով -- ԵՊՀ ռոմանագերմանական ֆակուլտետ 4-րդ կուրս (հեռակա) -60.000 դրամ
49. Շէխուկ Շանթ - ԵՊՀ ինֆ. և կիր. մաթ. Ֆակուլտետ 2-րդ կուրս - 80.000 դրամ

Այլ բուհերի ուսանողներ

50. Արուսյակ Մեսրոպյան - Արցախի պետհամալսարան, անգլ. լ. և գրակ. բաժին 1-ին կ - 150.000 դրամ
51. Անի Աղաջանյան - ԵՊԲՀ, Պլաստիկ վիրաբուժության մասնագ. 3-րդ կուրս -80.000 դրամ
52. Տրդատ Մնացականյան - ԵՊՃՇՀ, դիզայնի ֆակուլտետ, 3-րդ կուրս -60.000 դրամ
53. Էրիկ Խաչատրյան - Արցախի պետական համալսարան -50.000 դրամ
54. Անյա Հակոբյան - Արցախի պետհամալսարան, հայոց լ. և գր. ֆակուլտետ 1-ին կուրս -100.000 դրամ

ԽԵԱ «ԿՈՎ» ԾՐԱԳՐՈՎ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ԿՈՎԵՐԻ ԵՎ ՆՎԻՐԱՏՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ (սկիզբը՝ նախորդ համարներում)

h/h	Ստացող ընտանիքը	բնակավայրը	երեխ. թիվը	կովերի քանակ	բարերարները	Կովի N-ը
354	Բաղալյան Արմինե Վարդանյան Արմեն	Ալաշկերտ	4	I	«Արման Տերտերյան» բա-րեգործական հիմնադրամ	5903
355	Անտոնյան Կարինե Մուրադյան Սարգիս	Բերձոր	4	I	Ռուբիկ Մահմուդի	5176
356	Միքայելյան Ալինա Միքայելյան Անդրանիկ	Վակունիս	5	I	Հակոբ և Ալիսա Բաշմակյաններ	5776
357	Հովսեփյան Գոհար Հովսեփյան Սամվել	Վակունիս	3, մեկը զոհված	I	Վարդան և Սոնա Ֆունդուկյաններ «Անահիտ» հիմնադրամ	5781
358	Պողոսյան Տիգրան Պետրոսյան Անահիտ	Գողթանիկ	4	I		5141
359	Խաչատրյան Սևակ Ավանեսյան Նելլի	Գողթանիկ	5	I	Խաչատրյան Տիգրան և Փիլոսյան Անի	5105
360	Ափուջանյան Կարինե Վարդանյան Դավիթ	Միրիկ	4	I	Չարչյան Դավիթ	5757
361	Սողոմոնյան Մխիթար (միայնակ)	Կովսական	6	I	Օվանեսյան եղբայրներ	5772
362	Ալավերդյան Թամարա Իսունց Վանուշ	Ալաշկերտ	6	I	Ղևոնդյան Մասիս	5793
363	Խաչատրյան Թեհմինե Սուլթանյան Շահեն	Կումայրի	5	I	Հայթայան Լևոն	5782
364	Սուլթանյան Նաթելլա Առաքելյան Արարատ	Կումայրի	5	I	Հայրապետյան Էլեոնորա և Արմեն	5943
365	Խաչատրյան Լիլիա (ամուսինը մահացած)	Ղազարապատ	7	I	Ջանոյան Նուբար և Սոնա Վան	5943

366	Գրիգորյան Արևիկ Խոսրովյան Էռնեստ	Հերիկ	6	I	«Արարատ» հիմնադրամ	5749
367	Սիմոնյան Վիոլետա Ալեքսանյան Կարեն	Բերձոր	4	I	Հրազդան Մաջիդիյե	5748
368	Անդրեասյան Գայանե Ադամյան Արտակ	Կովսական	5	I	Նիկ և Մերի Քանյաններ	5725
369	Միրումյան Աննա Հարությունյան Լյովա	Աղավնո	6	I	Սերոժ և Մեդիկ Մեսրոպյաններ	5950
370	Գրիգորյան Անահիտ Մուրադյան Սևակ	Բերձոր	5	1 (Մարջան)	Նորա և Հարմիկ Ավանեսյաններ*	5130

* Բարերար Նորիկ Ավանեսյանը խնդրել է, որ իր ծնողների հիշատակին նվիրած կովի անունը լինի Մարջան: Նա նաև գրել է. Please accept this small token of our appreciation for the noble work carried out by the foundation to help feeding the children of Armenian villagers.

Sincerely yours,

Norick Avanessian

Շարունակելի

ԽՈՍՔ ԵՐԱԽՏԻՔԻ՝ Ի ԽՈՐՈՇ ՍՐՏԻ

Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Գողթանիկ համայնքի դպրոցը արդեն 23 տարեկան է: Այն տարածաշրջանի զարգացող դպրոցներից մեկն է թե՛ աշակերտների քանակով, թե՛ մասնագետների առկայությամբ: Իր գործունեության ողջ ընթացքում դպրոցի առջև շատ խնդիրներ են ծառացել, որոնք ըստ մեր կարողության և հնարավորության ջանացել ենք հաղթահարել: Սակայն տարիներ շարունակ դպրոցի ողջ անձնակազմը, աշակերտները և նրանց ծնողները մի մեծ երազանք են ունեցել, որ դպրոցը մշտական ջուր ունենա, և աշակերտներն ու ուսուցիչները ազատվեն ամեն օր իրենց հետ դպրոց ջուր բերելու ծանր հոգսից, որով լուծում էին ոչ միայն ծարավը հագեցնելու, այլև հիգիենայի հետ կապված զանազան խընդիրներ:

Վերջապես այդ երազանքն իրականացավ ԱՄՆ-ում գործող «Գարուն» բարեգործական կազմակերպության (հիմնադիր նախագահ՝ Սերոժ Մեսրոպյան, այժմյան նախագահ՝ Ֆլորա Սարյան) տրամադրած միջոցներով և «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» աջակցությամբ:

Շուրջ քառորդ դար սպասումներից հետո դպրոցը մշտական ջուր ունեցավ ամերիկահայ բարերարների միջոցներով, իսկ Գողթանիկի համայնքը՝ Գ. Մելիքյանի ղեկավարած հիմնադրամի ջանքերով:

- Մեծարգո՛ պրն Գ. Մելիքյան և այս մեծ գործին աջակցած բարերարներ, Գողթանիկի դպրոցի տնօրինության, ուսուցչական կազմի, աշակերտության և համայնքի բոլոր բնակիչների կողմից մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում Ձեզ ու բոլոր բարերարներին՝ ձեր բարեսրտության ու վսեմ արարքի համար, որով մեզ պարգևեցիք կենարար ջուրը: Ձեզ միշտ ուղեկցելու է սերունդների օրհնանքը: Ձեր ազգանվեր գործը թող օրինակ լինի շատերի համար, և Աստծո աջը միշտ հովանի լինի Ձեզ:

Գողթանիկ համայնքի ղեկավար՝
Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

01 մարտի 2018

* * *

Մեծարգո ՍՏԱՆԻՍԼԱՎ ԳՈՒՐԳԵՆԻ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ.

«Դերժավա - Ս» ՓԲ ընկերության կողմից մեզ տրամադրված երկաթյա մետաղաձողերը, որոնցով պաշտպանական վահան ենք ստեղծում նորատունկ ծառերի շուրջ, ոչնչացումից փրկում են Երևան-Ստեփանակերտ մայրուղու Բերձորի հատվածում այնքա՜ն զոհողությունների գնով իրականացվող ծառատունկի արդյունքները:

Հիմնադրամը բարձր է գնահատում Ձեր նվիրվածությունը համազգային գործին և այս ու մյուս դեպքերում ցուցաբերած պարբերական օգնության համար հայտնում խորին շնորհակալություն:

Բարով արժանանք մեր իրականացած երազանքներին:

***

Հիմնադրամին 500 լիտր վառելանյութ տրամադրելու համար շնորհակալություն է հայտնում

ՍԱՄՎԵԼ ՍԱՆԱՄՅԱՆԻՆ:

Վառելանյութն օգտագործվել է մարտի 10 - 12-ին ԵՊՀ 100 ուսանողների և դասախոսների Արցախ ուղևորվելու, պատմամշակութային հուշարձաններ այցելելու, Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքի մերձակայքում «Արցախյան շարժման 30-ամյակի պուրակը» հիմնադրելու և ծառատունկ կազմակերպելու համար:

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Եղիշե Չարենց

ԵՐԿՈՒ ՍՈՆՏ[1]

N.S.-ի հիշատակին
(հատված պոեմից)

Որպես գորշ, դեղին տերևներ,-
Ցրում է հողմը, ցրում –
Անդադար, սերունդե սերունդ-
Նաիրյան երգի արևկեր,
Աներկիր հունդը անմահ,
Որ վաղո՜ւց, իր հողից հեռու՝
Ե՛վ դարեր առաջ, և՛ հիմա –
Քշվել է տաշեղի նման
Աշխարհի բոլոր բացերում...
Եվ կրկին որպես տերևներ
Քշո՜ւմ է հողմը նրանց,
Որ չընկնեն, չամրանան նրանք
Հայրենի հողերի վրա,-
Այլ, իբրև դեղին տերևներ –
Թշնամի դաշտերում մեռնեն:

Եվ ահա ինչպես միշտ,- հիմա
Աշխարհի բոլոր կողմերից,
Ազատված բոլոր հողմերի
Ժանտաժանտ ուժից, մերձիմահ
Հավաքվել էին երբ հազիվ
Դաշտերում իրենց հարազատ –
Հայրենի հողմն է ահա ժանտ
Հալածում նրանց՝ բիրտ ու զազիր..

Թափվում են թափվում անդադար՝
Հայրենի հողմերի ներքո –
Խեղճացած, նողկալի երգով՝
Հայրենի սիրով հանցապարտ,-
Հարազատ, սիրած հանդերի
Եռանդուն խանդո՛վ հանցավոր –
Ընկնում են ընկնո՛ւմ հանցագործ,
Ինչպես տերևներն այս դեղին...

Ո՛չ, պոե՛տ, -օ ո՛չ,- օ ո՛չ,-
Ցնծագին երգով շառաչով
Տերևներն այս մահվան առաջող –
Նրանցից երջանիկ են ու ողջ,-
Նրանց մահն անմահ հորովել է՝
Հայրենի հողի հրավեր...

1 **Սոնտ** կամ **սոնթ** – Ըստ Ստ. Մալխասյանի բառարանի՝ գնչուական մի ցեղի անուն, որպես ածական՝ կրոնապես բաժանված:

N.S.-ը 1936 թ. հուլիսի 9-ին Աղասի Խանջյանի սպանությունից մեկուկես ամիս անց ձերբակալված և 1937 թ. գնդակահարված Ներսիկ Ստեփանյանն է:

1937

* * *

Բարձրավիզ կոշիկներ հագին,
Գլուխը ամպերին հասած –
Որպես ամեհի մի արձան,
Կանգնել է ամեհի, անթով,
Ցածրաճակատ, չեչոտ մի կին տոռ ...

Մի ոտքը Կրեմլի վրա ծանր,
Մյուսը Ուրալի վրա,
Լոլոսի նման խորախորհուրդ
Ծառացել է կերպարանքը նրա:-

Մի ոտքը դրած Վրաստան,
Մյուսը – Վլադիվոստոկ,-
Գլուխը ամպերին հասած
Բռնել է ահռելի, անթով
Մի ցածրաճակատ – կին տոռ՝
Զարհուրելի երևույթ չեղյալ
Աշխարհում օրերից առաջին:

Աշխարհի վեցերորդ մասում՝
Չինական պարսպից մինչև
Սևծովյան ափերը ջերմ,
Սառուցյալ օվկիանից մինչ Մասիս –
Այս անծիր երկրի վրա
Փռվել է ստվերը նրա,
Եվ երկիրը կրում է հազիվ ...

Շարմանկա ածող կավա՞տ, ավազա՞կ.-
Ո;չ – անծայրածիր
Մի ամբողջ երկիր
Մի արջի նման պարացնող է սա ...
Ո՛չ – ռուս ցարերի՝ Իոհան Ահեղի
Եվ պորփյուրակիր Նիկոլայների –
Վերջին ինքնակալ ժառանգորդն է
սա ...

Հսկա առաջնո՞րդ Մարքսին հավասար,
Մտածող փրկի՞չ աշխարհահամա...

Ո՛չ, աշխարհացունց
կատակլիզմների
Հանճարեղագույն խոհարարն է սա ...

Ինքնակալության աշխարհասասան
ժառանգորդն է սա ...

1936, XII

* * *

Մեզ գլ խատում էին մինչև հիմա՝
- Հանուն ոսկու, արյան կամ հավատի,
-
- Հանուն կամքի մեր պիղծ և
դավադիր,
- Հանուն վախի՝ տևող մինչև մահ ...

Մեզ գլ խատում էին մինչև հիմա՝
- Հանուն ցեղի՝ ընդմիշտ մեզ
թշնամի,-
- Հանուն մինարեի՝ ընդդեմ ժամի,
- Հանուն կյանքի՝ մեր մեջ
տեսնելով մուժ ու մա՛հ ...

Հովհաննես Շիրազ

ՀԱՅՈՑ ՈԳԻՆ

Որպես վշտի օրերն Հայոց՝
Այնքան խորն են ձորերն Հայոց,
Այնքան խորունկ ու այնքան մութ,
Որ գետերը մեր Հորձանուտ
Մթնում ահից մռնչացող
Մորը կորցրած ու դուրս փախչող
Վիշապաձագ են ինձ թվում՝
Մեր ձորերի
Մութ անձավում:

Բայց չգիտեմ՝ ձորե՞րն են մեր
Ոգուն տվել խորքեր խորին,
Թե՞ մեր ոգին է շռայլել
Իր խորությունն այս ձորերին:

Որպես կամքի դարերն Հայոց
Այնքան բարձր են սարերն Հայոց,
Այնքան բարձր ու այնքան վեր,
Ու քրտինքը մեր ճակատից
Միշտ ամպերի ձեռքն է սրբել,
Ու կթվա՝ դագաթներից
Մարդ կարող է
Աստղ համբուրել:

Բայց չգիտեմ՝ մեր ոգի՞ն է
Բարձունք տվել մեր լեռներին,
Թե՞ մեր ոգուն՝ սարերն են վեհ
Տվել բարձունք աստեղային...

* * *

Իմ մայր ազգին թեկուզ ի՛նքս մոր
պես ծնած լինեի,
Աստվածային ամբրոսների կաթով
սնած լինեի,
Ե՛ս լինեի թեկուզ ծնած
ամահություն իմ հայոց,-
Էլի պիտի պարտք մնայի՝ թեկուզ
Աստված լինեի:

* * *

Կամաց-կամաց մեկ էլ տեսար ծերանում,
Կյանքի ծովից չխմած ենք վերանում: -
Դատարկ մի՛ թող թասը ոչ մի վայելքի,
Ոչ մեկիս մահն իր ճամփին չի թերանում:
Բայց վա՜յ նրան՝ ով տանում է, ո՛չ թողնում.
Նա քուն չունի անգամ հողե անկողնում...

(*Այս մեկը տպագրվում է առաջին անգամ*)

ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ՝ Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ**
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԱՎԱԳՅԱՆ Ա, բ. գ. դ., պրոֆեսոր
ՄԵԼԻՔՅԱՆ Գ, բ. գ. թ., պրոֆեսոր
ՍԱՖԱՐՅԱՆ ԱԼ, պ. գ. թ., պրոֆեսոր

Նյութերը և ձևավորումը՝ Ս. Մուրադյանի:
Լուսանկարները՝ Զոհրաբ Հոքոյանի:
Տպաքանակը՝ 99:

Թերթը բաժանվում է անվճար:

Խմբագրության հասցեն՝
Երևան 0025, Աբովյան 52 Ա, ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, 215 սենյակ:
Հեռ.՝ 060 710 629, 055 -52- 29-36,
55 – 25 - 37, 52- 29- 36: